

ԲԱԺԻՆ 1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

ՀՏԴ 159.9

DOI: 10.53068/25792997-2024.2.12-12

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Վ.Ղ. Գեղամյան¹, Մ. Մ. Դավթյան²

¹ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

² «Կրթության մոլորակ» ուսումնական կենտրոն, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Մարզիկ, մարզիչ, սպորտային հոգեբան, հոգեբանական սպասարկում, գործունեության արդյունավետություն:

Հետազոտության արդիականություն: Ժամանակակից սպորտում մարզիկների հոգեբանական պատրաստության բարձր մակարդակի ապահովման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար սպորտային հոգեբանից պահանջվում է հոգեբանական սպասարկման նորովի մոտեցումներ և բազմատեսակ տեխնիկաների ներդրում:

Հոգեբանական արդյունավետ սպասարկումը մարզումներում, մրցումներում և օրվա ռեժիմում անհնար է իրականացնել առանց հատուկ վարժությունների կիրառման, դրանց կատարման որակի ստուգման, կառուցվածքային հետադարձ կապի և համապատասխան ծրագրերի պատրաստման, որոնք մեծ պահանջներ

են ներկայացնում սպորտային հոգեբանի գործունեությանը:

Սպորտի հոգեբանի գործունեությունը մարզիկի պատրաստության համակարգում առանձնացվում է 3 հիմնական ուղղությամբ՝ սոցիալ-անձնային, թերապևտիկ և մարզական-մրցումային: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր մեթոդներն ու խնդիրների լուծումը և մասնագետից պահանջում է լրացուցիչ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ [8,9]: Այդ ամենով հանդերձ՝ սպորտում հոգեբանի գործունեության բազմազանության մեջ կարելի է առանձնացնել «մարզիկ-մարզիչ-հոգեբան» փոխհարաբերության և համագործակցության գիտակցման աստիճանը, որից էլ կախված է կոնկրետ ձևերի գործունեության արդյունավետությունը [3,7]:

Սպորտային հոգեբանների կողմից մշակվել են գիտականորեն հիմնավորված բազմաթիվ առաջարկություններ և

հետազոտություններ՝ կապված մարզիկի հոգեբանական ապահովման տարբեր կողմերին՝ հոգեկանոնավորում, հոգեախտորոշում, հոգեբանական վերահսկողություն և այլն: Սպորտային հոգեբանի գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում ուղղված են մարզիկների հոգեբանական սպասարկման հիմնախնդիրներին [1,2,4,6], սակայն գրականության մեջ անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել մարզիկների և մարզիչների կողմից սպորտի հոգեբանի ծառայություններից օգտվելու դրդապատճառների, նրա դերի և կարևորության աստիճանի բարձրացման հիմնախնդիրներին:

Սպորտային հոգեբանի գործունեության յուրահատկությունների ուսումնասիրություններից նաև պարզ է դառնում, որ այն բազմաբովանդակ և յուրահատուկ գործունեության ոլորտ է. ներառում է տարբեր գործոններ, բաղադրամասեր, առանձնահատկություններ, որոնք էականորեն տարբերվում են այլ ոլորտի հոգեբանների գործունեությունից [5,7]:

Ելնենով վերը նշվածից՝ առավել կարևոր դեր են խաղում սպորտային հոգեբանների մասնագիտական զարգացման ու կատարելագործման խնդիրները: Այդ պատճառով վերջին տարիներին սպորտի հոգեբանների կրթությունն ու վերապատրաստումը մեծ ուշադրության են արժանանում:

Սպորտային հոգեբանի կարևորությունը գիտակցվել է տասնամյակներ շարունակ, սակայն ոչ միշտ է, որ մարզիչներն ու մարզիկներն ուշադրություն են դարձրել, թե ինչպես կարող է նա նպաստել սպորտային բարձր արդյունքների նվաճմանը:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել սպորտային հոգեբանի գործունեության արդյունավետությանը նպաստող պահանջներն ու առանձնահատկությունները մարզիկների պատրաստության գործընթացում:

Խնդիրներն են.

1. Ուսումնասիրել սպորտային հոգեբանի գործունեության յուրահատկությունները:

2. Մարզիչների և մարզիկների դիրքորոշումների հիման վրա բացահայտել սպորտային հոգեբանի գործունեության արդյունավետությանը նպաստող առաջնային պահանջներն և դրանց բարելավման ուղիները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, անկետավորում, դիտումներ, հոգեբանի գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրություն և վերլուծություն:

Հաշվի առնելով տարբեր հեղինակների կողմից կարևորած այս հիմնախնդիրը՝ մեր կողմից մշակվել է երկու

հարցաթերթ, որոնք ուղղված են՝ բացահայտելու մարզիչների և մարզիկների կարծիքները սպորտի հոգեբանի դերի, կարևորության, ինչպես նաև գործունեության արդյունավետության ապահովման բաղադրիչների վերաբերյալ:

Հետազոտական գործընթացն իրականացվել է 2023-2024թթ., որտեղ ընդգրկվել են անհատական, մենապայքարային և թիմային մարզաձևերի 73 մարզիչներ՝ 59 արական սեռի, 14-ը՝ իգական և 103 մարզիկներ, որոնցից 80-ը՝ արական, 23-ը՝ իգական (ըմբշամարտ, բռնցքամարտ, ծանրամարտ, մարմնամարզություն, լող, ֆուտբոլ, բասկետբոլ և այլն): Հետազոտված մարզիչների միջին մանկավարժական ստաժը կազմել է՝ 15-17, իսկ մարզիկներինը՝ 8-10 տարի:

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարվել են համեմատական վերլուծություններ, տրվել են սպորտային հոգեբանի գործունեության արդյունավետությանը նպաստող գործոնների բնութագրերն ու մարզիկների կողմից վերհանված խնդիրները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հատուկ հարցաշարի միջոցով փորձ է արվել, ըստ մարզիչների կարծիքների, բացահայտել սպորտային հոգեբանի նշանակությունը, գործունեության արդյունավետությանը նպաստող պատճառներն ու դրանց բարելավման ուղիները մարզիկների հոգեբանական սպասարկման գործընթացում:

Իրականացված անկետավորման արդյունքում պարզվեց, որ մարզիչների 59%-ը կարևորում է սպորտային հոգեբանի դերը մարզիկների բարձր մրցակցային արդյունքների ցուցադրման գործում: Հետազոտվածների 14%-ը կարծում է, որ սպորտային հոգեբանը մասամբ կարող է նպաստել մրցակցային բարձր արդյունքների նվաճմանը, իսկ մարզիչների 27%-ի կողմից տրվել է բացասական պատասխան: Այստեղ հետաքրքրականն այն է, որ մարզիչների 68%-ը առաջնային է համարում մրցակցային բարձր արդյունքների ցուցադրման գործում մարզիկի հոգեբանական պատրաստության բարձր մակարդակը, սակայն 27 տոկոսն է գտնում, որ այդ գործընթացի կազմակերպումը պետք է իրականացնի սպորտի հոգեբանը: Սա փաստում է, որ մարզիչների զգալի տոկոսը (53%) վստահ է, որ կարող է լիարժեք փոխարինել հոգեբանին և կատարել նրա ֆունկցիան՝ հաշվի չառնելով հոգեբանական սպասարկման գործընթացի յուրահատկություններն ու խորը մասնագիտական և տեսական գիտելիքները, ինչը կարող է ունենալ միայն հատուկ կրթություն և որակավորում ստացած, դիպլոմավորված մասնագետ-հոգեբանը:

Վերը նշվածից կարելի է հետևություն անել, որ հենց այս կարծիքների հետևանքով է, և սա է հիմնական պատճառը, որ երբեմն մեր հանրապետության մարզիկների հոգեբանական սպասարկման գործ-

ընթացը թերի է մնում, և մարզիչ-հոգեբան, մարզիչ-հոգեբան համագործակցությունը հաճախ չի տալիս ցանկալի արդյունք: Ուստի, կարելի է կատարել մասնակի եզրահանգում, որ սպորտի հոգեբանի գործունեության արդյունավետության գրավականներից մեկը հենց մարզիչների դիրքորոշումն ու մոտիվացվածությունն է այս գործընթացին:

Հետազոտության արդյունքներից պարզ է դառնում նաև, որ 34%-ն է միայն այն կարծիքին, որ մարզիչը չի կարող փոխարինել հոգեբանին, քանզի նա չունի մասնագիտական հոգեբանական կրթություն և համապատասխան գիտելիքներ, այս կարծիքը նաև կիսում ենք մենք՝ հիմնվելով գրականության աղբյուրների և մեր երկրում առկա սակավաթիվ պրակտիկ սպորտի հոգեբանների կարծիքների վրա: Այս հարցի վերաբերյալ մարզիչների 14%-ի կողմից տրվել են տարաբնույթ կարծիքներ՝ մարզչի բավարար գիտելիքներ, անձի առանձնահատկություններ, հեղինակություն և նմանատիպ այլ տարաբնույթ տարբերակներ:

Հարցման արդյունքում փորձ է արվել նաև պարզել, թե որ դեպքում կարող է արդյունավետ լինել հոգեբանի գործունեությունը մարզական թիմում: Այսպես՝ մարզիչների վերլուծմամբ՝ ըստ տոկոսային հարաբերակցության՝ ակնհայտ է դառնում հետևյալ փաստը, մարզիչները գտնում են, որ հոգեբանի գործունեությունն արդյունավետ կլինի միայն այն ժա-

մանակ (51%), եթե իրենք հրավիրեն հոգեբանին թիմ՝ հաշվի չառնելով թիմի անդամների կարծիքները, հոգեբանի հետ համագործակցելու ցանկության պակասը, հոգեբանին չընդունելը կամ մերժելը: Այս գործոնը կարող է միայն արդյունավետ լինել այն ժամանակ, երբ մարզիկների մոտ նախօրոք կծնավորվի հոգեբանի ծառայությունից օգտվելու համապատասխան դրդապատճառներ:

Մարզիչները հաջորդաբար առաջնայնությունը տվել են երբ հոգեբանին են նշանակում թիմում (30%): Ճիշտ է, սա առաջին հայացքից թվում է արդյունավետ, սակայն այն ունի մի շարք բարդություններ և խնդիրներ.

➤ Նախ՝ մեր երկրում գրեթե չի գրանցվել նմանօրինակ դեպք, երբ հոգեբանին պետական հաստիքով նշանակեն որևէ թիմ, ուստի դժվար է գնահատել այս մոդելի արդյունավետությունը:

➤ Երկրորդ՝ ենթադրվում է, որ մարզիչները կարևորում են այս մոդելի ոչ թե արդյունավետության կողմը, այլ պատասխանատվությունից խուսափումը, քանզի անհրաժեշտության դեպքում իրենք պետք է կարողանան գտնել համապատասխան մասնագետ-հոգեբան, որը կսպասարկի թիմը, իսկ այստեղ ծախսողման դեպքում պատասխանատվության մեծ բաժինը կմնա մարզչին՝ ոչ ճիշտ կամ ոչ կոմպետենտ հոգեբանի ընտրության համար:

➤ Երրորդ՝ այս մոդելում հոգեբանի աշխատանքն առավել դժվար է, քանի որ

մարզչի և մարզիկների հետ համագործակցության համար պահանջվում է երկար ժամանակ: Եվ այստեղ արդյունավետությունն էականորեն կապված է հոգեբանի ծառայություններից օգտվելու գիտակցականության աստիճանից, ինչպես նաև՝ համագործակցության դրդապատճառների բավարար մակարդակից:

Հաջորդիվ, մարզիչների 15%-ի կարծիքով սպորտային հոգեբանի գործունեությունն արդյունավետ կլինի, երբ իրենց հետ աշխատի հոգեբանը, իսկ իրենք աշխատեն մարզիկի հետ: Նման տոկոսային հարաբերակցությունը օբյեկտիվ է, քանզի հետազոտված մարզիչներից այս գործոնին են առավելությունը տվել հատկապես նրանք, ովքեր այս կամ այն չափով առնչվել են սպորտային հոգեբանի գործունեության հետ և ունեն որոշակի հոգեբանական գիտելիքներ (այս մոդելը կարևորած մարզիչներից 8-ը տարբեր տարիներին մասնակցել են սպորտի հոգեբանության հիմնախնդիրներին վերաբերող սեմինարների և վերապատրաստման դասընթացների): Մեր տեսանկյունից նույնպես կարող ենք փաստել, որ այս մոդելը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ մարզիչն ունենա համապատասխան հոգեբանական գիտելիքներ և որոշակի փորձ հոգեբանական տեխնիկաների կիրառման վերաբերյալ:

Հետաքրքրականն այն է, որ մարզիչների մեծամասնությունը դեմ է, որ մարզիկն ինքնակամ դիմի հոգեբանին: Այս

հարցի վերաբերյալ դրական կարծիք ունեն միայն մարզիչների 4%-ը: Իսկ տարբեր ոլորտներում հոգեբանական ծառայություն իրականացնող հոգեբան-մասնագետները պնդում են, որ յուրաքանչյուր հոգեբանական խնդրի լուծման արդյունավետությունն էականորեն պայմանավորված է հոգեբանական ծառայությունից օգտվելու անձի դրդապատճառներով, հոգեբանին վստահելու, սեփական խնդիրները գիտակցելու և, իհարկե, շրջապատի վերաբերմունքով:

Վերը նշվածից կարելի է փաստել, որ մեր հանրապետության տարբեր մարզածների մարզիչներն էական կարևորություն են տալիս սպորտի հոգեբանի ծառայություններից օտվելու և մարզիկի հոգեբանական պատրաստության գործընթացին, սակայն, դեռ չունենալով համապատասխան փորձ այդ ծառայություններից օգտվելու ճիշտ և նպատակային ձևերին, առաջադրում են սեփական պատկերացումները՝ հատկապես իրենք պետք է որոշեն և հոգեբանին հրավիրեն թիմ, իսկ մարզիկը սեփական ցանկությամբ դիմելու դեպքում, ըստ մարզիչների կարծիքների, կարող է լինել անարդյունավետ:

Մարզիչների և մարզիկների շրջանում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա համեմատական վերլուծության են ենթարկվել նաև սպորտային հոգեբանի գործունեության առանձնահատկությունների, արդյունավետությանը նպաստող պատճառների,

հոգեբանի ծառայություններից օգտվելու, ինչպես նաև հոգեբանի դերի և կարևորությանն առնչվող հարցերից ստացված հետազոտության տվյալները:

Այսպես՝ մարզիչների և մարզիկների կարծիքները մարզիկների բարձր մրցակցային արդյունքների ցուցադրման գործում հոգեբանի դերի և կարևորության վերաբերյալ հակասական են՝ մարզիչների 59%-ը և մարզիկների 81%-ն էական նշանակություն և կարևորություն են տալիս սպորտի հոգեբանի գործունեությանը:

Հետազոտության արդյունքների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ մարզիկները, ի տարբերություն մարզիչների, առավել են գնահատում հոգեբանի կարևորությունը, սակայն հետաքրքրականն այն է, որ մարզիկների միայն չնչին՝ 6% է երբևէ օգտվել սպորտային հոգեբանի ծառայություններից:

Այն հարցին, թե մարզիչը կարո՞ղ է փոխարինել հոգեբանին, ստացել ենք հետաքրքիր և հակասական պատասխաններ: Մարզիչները, թեև բավականին բարձր տոկոսային հարաբերակցությամբ, կարևորում են հոգեբանի դերն ու նշանակությունը բարձր մրցակցային արդյունքների ցուցադրման գործում, սակայն գտնում են, որ կարող են լիարժեք փոխարինել հոգեբանին և ինքնուրույն իրականացնել մարզիկի հոգեբանական սպասարկման գործընթացը: Ի տարբերություն մարզիչների, մարզիկներն ունեն այլ կարծիք, որ մարզիչը չի կարող փոխարինել www.sportedu.am

հոգեբանին՝ մեկնաբանելով, որ նա չունի հոգեբանական խորը գիտելիքներ, սպորտում կան իրավիճակներ, երբ հենց մարզչին է անհրաժեշտ հոգեբանական խորհրդատվություն, կան գաղտնիքներ, որ չեն կարողանում կիսվել մարզիչի հետ և նմանատիպ այլ մեկնաբանություններ:

Մարզիկների կողմից ներկայացված կարծիքներն առավել օբյեկտիվ են, քանզի ենթադրվում է, որ նման մոտեցումը պայմանավորված է մարզիչների բարձր ինքնագնահատականի, սեփական հեղինակության և, իհարկե, սպորտային հոգեբանի գործունեության հետ առնչվելու փորձի պակասի հետ:

Հետազոտության արդյունքների վերջին փուլում մեր կողմից փորձ է արվել նաև համեմատական վերլուծության ենթարկել մարզիչների և մարզիկների կողմից առաջադրված հոգեբանի գործունեության արդյունավետությանը նպաստող գործոնների տոկոսային հարաբերակցությունները, որի արդյունքում պարզ է դառնում, որ մարզիկների 19%-ը հակված է և ունի ներքին դրդապատճառներ՝ անհրաժեշտության դեպքում ինքնական դիմել հոգեբանին (մարզիչների միայն 4% է կողմ, որ մարզիկն ինքնական դիմի հոգեբանին): Մարզիչների 51%-ը գտնում են, որ անհրաժեշտության դեպքում իրենք պետք է հոգեբանին հրավիրեն թիմ (մարզիկների 22% է կողմ, որ մարզիչը հոգեբանին հրավիրի թիմ): Նման հակասական մոտեցումների պատճառով ենթադրվում է, որ կարող է ի հայտ

գալ մարզիկ-մարզիչ, մարզիչ-հոգեբան, մարզիկ-հոգեբան փոխհարաբերությունների խաթարում և հոգեբանի նկատմամբ անվստահություն, ինչն էլ կարող է իր հերթին առաջ բերել ոչ արդյունավետ համագործակցություն: Այստեղ հետաքրքրականն այն է՝ մարզիկներն առավել շատ տոկոսային հարաբերակցությամբ գտնում են, որ հոգեբանի գործունեությունն արդյունավետ կլինի, եթե նրան պաշտոնապես նշանակեն թիմ (մարզիչներ 30%, մարզիկներ 53%), և քիչ հակված են, երբ հոգեբանը աշխատի մարզչի հետ, իսկ մարզիչը՝ մարզիկի (մարզիչներ 15%, մարզիկներ 6%): Այս հարցերի վերաբերյալ տոկոսային նման հարաբերակցությունն օրինաչափ է, քանզի մարզիկներն ունեն պատրաստակամություն՝ համագործակցելու և օգտվելու հոգեբանի ծառայություններից, սակայն այստեղ խոչընդոտ է մարզչի դիրքորոշումը (մարզիչները պնդում են, որ անհրաժեշտության

դեպքում իրենք պետք է հոգեբանին հրավիրեն թիմ):

Եզրակացություն: Հետազոտության արդյունքները փաստում են, որ սպորտի հոգեբանն էական դեր կարող է ունենալ սպորտային բարձր արդյունքների ցուցադրման գործում, այնինչ մարզիչների զգալի տոկոսը վստահ է, որ կարող է լիարժեք փոխարինել հոգեբանին և կատարել նրա ֆունկցիան՝ հաշվի չառնելով հոգեբանական պատրաստության գործընթացի ապահովման յուրահատկությունները:

Մարզիկներն առաջնայնությունը տալիս են թիմում հոգեբանի պաշտոնական նշանակմանը և քիչ հակված են, երբ հոգեբանը աշխատի մարզչի հետ, իսկ մարզիչը՝ մարզիկի, այսինքն՝ մարզիկների մոտ բարձր է պատրաստակամությունը՝ համագործակցելու և օգտվելու հոգեբանի ծառայություններից:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաբայան Հ.Ա., Հոգեբանական պատրաստության հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2007, 121 էջ:
2. Բաբայան Հ.Ա., Գեղամյան Վ.Ղ., Հոգեբանական պատրաստության պահանջները և հոգեբանի գործունեության յուրահատկությունները ժամանակակից բարձր նվաճումների սպորտում, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ա պրակ, Երևան, 2009, էջ 63-68:
3. Գեղամյան Վ.Ղ., Ստեփանյան Ա.Գ., Սոֆյան Թ.Շ., Սպորտի հոգեբանի գործունեության յուրահատկությունները, Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2018, էջ 76-80:

4. Ильин, Е.П. Психология спорта : [учебник] / Е.П. Ильин. - Санкт-Петербург : Питер, 2019. - 351 с.
5. Малкин В. Р., Психологическая работа в детско-юношеской спортивной школе: Учеб. пособие: Изд-во Урал. ун-та, 2016. – 102 с.
6. Спортивная психология: учебник для академического бакалавриата /под общ. ред. В. А. Родионова, А. В. Родионова, В. Г. Сивицкого. — М .; И здательство Юрайт, 2018. — 367 с.
7. Сивицкий В.Г., Типичные модели взаимодействия с психологом в учебно-тренировочном процессе, Материалы VI международной научной конф. “Рудиковские чтения” 2010, с. 357-359.
8. Barker, S., & Winter, S., The practice of sport psychology: A youth coaches' perspective. *International Journal of Sports Science & Coaching*, 9(2), 2014, p. 379–392.
9. Weinberg, R. S., Gould, D., *Foundations of Sport and Exercise Psychology*, Human Kinetics; Seventh edition, 2018, p. 680.

MODERN REQUIREMENTS ON THE EFFECTIVENESS OF THE ACTIVITY OF A SPORTS PSYCHOLOGIST

V.Kh. Geghamyan¹, M.M. Davtyan²

*¹Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia,*

²Educational Center, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Athlete, coach, sports psychologist, psychological services, the effectiveness of the activity.

Research relevance: Effective psychological service in sports is impossible without the intervention of a highly qualified sports psychologist.

The importance of a sports psychologist has been recognized for decades, but coaches and athletes have not always paid attention to how it can contribute to achieving high sports results.

Research aim: The purpose of the work is to study and substantiate new approaches and features that ensure the effectiveness of the activity of a sports psychologist in the process of training athletes.

Research methods and organization: The study of scientific and methodological literature, questionnaires, observations, study and analysis of the characteristics of the psychologist's activity.

The study involved 73 coaches and 103 athletes.

Research results analysis: An analysis of the results of the study using a special questionnaire showed that coaches of various sports in our country attach great importance to the activities of a sports psychologist, but put forward their own ideas not yet having relevant experience in the correct and targeted ways of using these services.

From a comparative analysis of the results of the study, it became obvious that athletes, unlike coaches, appreciate the importance of a psychologist more, but only an insignificant 6% of them has ever used the services of a sports psychologist. Athletes are ready to cooperate and use the services of a psychologist, but the position of the coach is an obstacle here.

Conclusion: Athletes give priority to the official appointment of a psychologist to the team and are little inclined when a psychologist works with a coach and a coach works with an athlete, that is, athletes have a high willingness to cooperate and use the services of a psychologist.

Athletes give priority to the official appointment of a psychologist to the team and are little inclined to have a psychologist work with a coach and a coach work with an athlete. So athletes have a high willingness to cooperate and use the services of a psychologist.

СОВРЕМЕННЫЕ ТРЕБОВАНИЯ К ЭФФЕКТИВНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ СПОРТИВНОГО ПСИХОЛОГА

В.К. Гезамян¹, М.М. Давтян²

*¹Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения,*

²Образовательный Центр, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова. Спортсмен, тренер, спортивный психолог, психологические услуги, эффективность деятельности.

Актуальность исследования. Эффективная психологическая служба в спорте невозможна без вмешательства высококвалифицированного спортивного психолога.

Важность спортивного психолога признается на протяжении десятилетий, но тренеры и спортсмены не всегда обращали внимание на то, как он может способствовать достижению высоких спортивных результатов.

Целью исследования является изучение и обоснование новых подходов и особенностей, обеспечивающих эффективность деятельности спортивного психолога в процессе подготовки спортсменов.

Методы и организация исследования. Изучение научно-методической литературы, анкетирование, наблюдения, изучение и анализ особенностей деятельности психолога.

В исследовании приняли участие 73 тренера и 103 спортсмена из индивидуальных и командных видов спорта.

Анализ результатов исследования. Анализ результатов исследования с использованием специальной анкеты показал, что тренеры различных видов спорта в нашей стране придают большое значение деятельности спортивного психолога, но, еще не имея соответствующего опыта в правильных и целенаправленных способах использования этих услуг, выдвигают собственные идеи.

Из сравнительного анализа результатов исследования стало очевидно, что спортсмены, в отличие от тренеров, больше ценят важность психолога, но лишь 6% из них когда-либо пользовались услугами спортивного психолога. Спортсмены готовы сотрудничать и пользоваться услугами психолога, но позиция тренера здесь является препятствием.

Краткие выводы. Спортсмены отдают приоритет официальному назначению психолога в команду и мало склонны к тому, чтобы психолог работал с тренером, а тренер - со спортсменом, то есть у спортсменов высокая готовность сотрудничать и пользоваться услугами психолога.

Տեղեկություններ հեղինակների մասին

Վարդան Ղազարի Գեղամյան՝ հ.գ.թ., Ա. Լալայանի անվան Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: vardan.geghamyan@sportedu.am

ORCID: 0000-0001-6516-9120

Մերի Միլիտոսի Դավթյան, <<Կրթության մոլորակ>> ուսումնական կենտրոն, անգլերենի մասնագետ, Երևան, Հայաստան E.mail: meri.davtyan37@gmail.com

Information about the authors

Vardan Ghazar Geghamyan, PhD, Associate Professor, Head of the Chair of Sports Pedagogy and Psychology after A. Lalayan, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: vardan.geghamyan@sportedu.am

ORCID: 0000-0001-6516-9120

Mary Militos Davtyan, English Specialist, Education Planet Training Center, Yerevan, Armenia E-mail: meri.davtyan37@gmail.com

Հոդվածն ընդունվել է 17.06.2024–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 18.06.2024–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյան